

ՓՈԽԸՄԲՈՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՄԱՔՍԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՎ ԻՐԱՆԻ ԻՍԼԱՄԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԳՈՐԾԵՐՈՒՄ ՓՈԽԱԴԱՐՁ ՎԱՐՉԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր մաքսային պետական կոմիտեն եւ Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային ծառայությունը, այսուհետ՝ Պայմանավորվող կողմեր,

հաշվի առնելով 2001 թվականի դեկտեմբերի 27-ին Թեհրան քաղաքում ստորագրված "Հայաստանի Հանրապետության Կառավարության եւ Իրանի Իսլամական Հանրապետության

Կառավարության միջեւ մաքսային օրենսդրության պատշաճ կիրառման եւ մաքսային իրավախախտումների կանխարգելման, հետաքննության ու դրանց դեմ պայքարի համար փոխադարձ վարչական օգնության մասին" Համաձայնագիրը, այսուհետ՝ Համաձայնագիր,

ընդունելով անվտանգության եւ միջազգային առևտրի մատակարարման շղթայի պարզեցման նկատմամբ աճող համընդհանուր հետաքրքրությունը եւ դրա վերաբերյալ մաքսային համաշխարհային կազմակերպության 2002 թվականի հունիսի որոշումը,

համոզված լինելով, որ մաքսային իրավախախտումների դեմ ուղղված գործողությունն ավելի արդյունավետ կլինի մաքսային ծառայությունների միջեւ սերտ համագործակցության միջոցով,

նպատակ ունենալով պատշաճ կերպով կիրառել Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքի եւ Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային տարածքի միջեւ

ապրանքների արտահանման, ներմուծման, տարանցման, փոխբեռնման եւ պահպանման, ինչպես նաեւ ուղեւորների եւ տրանսպորտային միջոցների տեղաշարժի մասին մաքսային օրենսդրությունը,

ընդունելով, որ Համաձայնագրի դրույթներին համապատասխան՝ Պայմանավորվող կողմերի միջեւ փոխադարձ վարչական օգնությունը եւ համագործակցությունը կբարելավի երկու պետություններում մաքսային հսկողության գործընթացը,

համաձայնեցին հետեւյալի մասին.

ՀՈՂՎԱԾ 1

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, Համաձայնագրի համաձայն, աջակցությունը կցուցաբերի իր գործող ազգային օրենսդրությունը համապատասխան եւ իր իրավասության ու առկա միջոցների սահմաններում:

ՀՈՂՎԱԾ 2

Համաձայնագիրն ընդգրկում է Պայմանավորվող կողմերի միջեւ մաքսային գործերում փոխադարձ վարչական օգնությունը եւ նպատակ չի հետապնդում առնչվելու նրանց պետությունների միջեւ փոխադարձ իրավական օգնության համաձայնագրերին:

Եթե փոխադարձ վարչական օգնությունը պետք է իրականացվի հայցվող Պայմանավորվող կողմի այլ պետական մարմինների կողմից, հայցվող ծառայությունը պետք է նշի այդ մարմինները եւ, հայտնի լինելու դեպքում, համապատասխան համաձայնագիրը կամ ձեռք բերված համաձայնությունը:

Համաձայնագրի դրույթները չեն կարող իրավունք տալ որեւէ անձի՝ խոչընդոտելու օգնության հարցման կատարումը:

ՀՈՂՎԱԾ 3

Ի իրագործումն Համաձայնագրի 3-րդ հոդվածի՝ Պայմանավորվող կողմերը հարցման հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ միմյանց կտրամադրեն տեղեկատվություն, որը կստեղծի երաշխիքներ մաքսային օրենսդրության պատշաճ կիրառման եւ մաքսային իրավախախտումների կանխարգելման, հետաքննության ու դրանց դեմ պայքարի համար:

Այդպիսի տեղեկատվությունը կարող է վերաբերել.

ա) մաքսային օրենսդրության կիրառման նոր միջոցներին, որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունը,

բ) մաքսային իրավախախտումներ կատարելու նոր միտումներին, միջոցներին եւ մեթոդներին,

գ) ցանկացած այլ տեղեկության, որը կարող է օգնել մաքսային ծառայություններին հսկողության եւ ընթացակարգերի պարզեցման նպատակներով ռիսկի գնահատման հարցում:

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իր մաքսային տարածքում ի շահ մյուս Պայմանավորվող կողմի հարցումներ կատարելիս պետք է օգտագործի բոլոր առկա միջոցները հայցվող օգնությունը տրամադրելու համար:

ՀՈԴՎԱԾ 4

Ի իրագործումն Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի "ա" ենթակետի՝ Պայմանավորվող կողմերը հարցման հիման վրա միմյանց տրամադրում են իրենց մոտ առկա կամ լրացուցիչ ստացված այն տեղեկատվությունը եւ փաստաթղթերը, որոնք թույլ կտան հսկողություն իրականացնել Պայմանավորվող կողմերի պետությունների մաքսային տարածքների միջեւ տեղափոխվող ապրանքների մաքսային արժեքի նկատմամբ, որոնցից են

մաքսային հայտարարագրի հաստատված պատճենը, հաշիվ-ապրանքագրի կամ հաշիվ-ապրանքագիր-մասնացուցակի, տրանսպորտային փաստաթղթերի, փաթեթավորման

ապրանքային ցանկերի, ինչպես նաեւ գործին առնչվող այլ մաքսային փաստաթղթերի պատճենները:

Այդ փաստաթղթերը պետք է թարգմանվեն անգլերեն այն ծավալով, որը հնարավորություն կտա հայցող Պայմանավորվող կողմին գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը:

ՀՈԴՎԱԾ 5

Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետի դրույթների սահմաններում Պայմանավորվող կողմերը կփոխանակեն իրենց փորձը եւ ձեռքբերումները մաքսային գործի բնագավառում՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի աջակցությամբ կազմակերպվող տարածաշրջանային հանդիպումներում եւ ուսումնական դասընթացներում ակտիվ մասնակցության միջոցով:

ՀՈԴՎԱԾ 6

Համաձայնագրի 11-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ Պայմանավորվող կողմերը կլիազորեն սույն Փոխըմբռնման հուշագրի 1-ին եւ 2-րդ Հավելվածներում նշված իրենց պաշտոնատար անձանց՝ Համաձայնագրի իրականացման եւ կիրառման նպատակով անմիջականորեն հաղորդակցվելու համար: Անհրաժեշտության դեպքում լիազորված պաշտոնատար անձանց ցանկը կնորացվի:

ՀՈԴՎԱԾ 7

Պայմանագրի կողմերի լիազորված պաշտոնատար անձինք հարցման հիման վրա կամ սեփական նախաձեռնությամբ միմյանց կտրամադրեն Համաձայնագրի 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ եւ 8-րդ հոդվածներում նշված տեղեկատվությունը, ինչպես նաեւ երկկողմ առևտրի վերաբերյալ վիճակագրական տվյալները:

Ոչ սակագնային սահմանափակումներին ենթակա՝ հատուկ կարելություններ կայացնող եւ ռազմավարական ապրանքների ու առարկաների ցանկը, որոնք թվարկված

են Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետում, բերված է սույն Փոխըմբռնման հուշագրի 3-րդ Հավելվածում:

Այդպիսի հատուկ կարելություններ կայացնող եւ ռազմավարական ապրանքների ու առարկաների մասին տեղեկատվությունը պետք է փոխանակվի ներմուծման եւ/կամ արտահանման պահին, եթե դրանց տեղաշարժը պարունակում է կամ ենթադրվում է, որ կարող է պարունակել մաքսային իրավախախտում:

Ցանկը ենթակա է վերանայման Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրի պահանջի դեպքում:

ՀՈԴՎԱԾ 8

Պայմանավորվող կողմերն ինչպես հարցման հիման վրա, այնպես էլ սեփական նախաձեռնությամբ կտրամադրեն միմյանց տեղեկատվություն՝ ծրագրավորված, ընթացքի մեջ գտնվող կամ ավարտված այն գործողությունների վերաբերյալ, որոնք պարունակում են կամ ենթադրվում է, որ կարող են պարունակել մաքսային իրավախախտում մյուս Պայմանավորվող կողմի պետության մաքսային օրենսդրության դեմ:

Այն դեպքում, երբ զգալի վնաս կարող է հասցվել Պայմանավորվող կողմերից մեկի պետության տնտեսությանը, պետական անվտանգությանը կամ ցանկացած այլ կենսական շահին, մյուս Պայմանավորվող կողմը հնարավորության դեպքում իր սեփական նախաձեռնությամբ անհապաղ պետք է տրամադրի վերը նշված տեղեկատվությունը:

ՀՈԴՎԱԾ 9

Համաձայնագրի 7-րդ հոդվածի դրույթներին համապատասխան՝ հայցվող Պայմանավորվող կողմը պետք է տրամադրի հայցող Պայմանավորվող կողմին տեղեկատվություն կամ մաքսային փաստաթղթեր այն դեպքերում, երբ վերջինս հիմքեր ունի կասկածի տակ առնելու մաքսային ձեւակերպումներին առնչվող անձանց կողմից տրամադրված տեղեկատվությունը կամ ներկայացված մաքսային փաստաթղթերը:

ՀՈԴՎԱԾ 10

Համաձայնագրի 9-րդ հոդվածին համապատասխան՝ Պայմանավորվող կողմերն իրենց իրավասությունների շրջանակներում կարող են թույլատրել ապօրինի կամ կասկածելի ապրանքների տեղափոխումը իրենց տարածքներից դուրս, տարածքների միջոցով կամ դեպի

իրենց տարածքները՝ մաքսային իրավախախտումների հետախուզման եւ դրանց դեմ պայքարելու նպատակով:

Եթե այդպիսի տեղափոխումները չեն կարող իրականացվել մաքսային ծառայության հսկողության ներքո, այդ ծառայությունը պետք է համագործակցի այդպիսի իրավասություն ունեցող ազգային ծառայությունների հետ կամ գործը փոխանցի նրանց:

ՀՈԴՎԱԾ 11

Համաձայնագրի 14-րդ հոդվածին համապատասխան՝ այն դեպքում, երբ հայցող Պայմանավորվող կողմը չի կարողանալու կատարել հայցվող Պայմանավորվող կողմի՝ իրեն ուղղվող նմանատիպ հարցումը, նա իր հարցման մեջ պետք է ուշադրության հրավիրի այդ փաստի վրա:

Այդպիսի հարցումները կկատարվեն հայցվող Պայմանավորվող կողմի հայեցողությամբ:

ՀՈԴՎԱԾ 12

Պայմանավորվող կողմերի պաշտոնատար անձինք անհրաժեշտության դեպքում

կհանդիպեն՝ յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի պահանջով՝ Համաձայնագրի եւ սույն Փոխըմբռնման հուշագրի իրականացման հետ կապված խնդիրներ եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ցանկացած այլ հարց քննարկելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 13

Սահմանային մաքսային կետերում ուղեւորային/բեռնային փոխադրումների ծանրաբեռնվածությունը թեթեւացնելու նպատակով Պայմանավորվող կողմերը իրենց մաքսային տարածքների միջեւ ապրանքների, ուղեւորների եւ տրանսպորտային միջոցների տեղաշարժի համար փոխադարձաբար կստեղծեն ավելի բարենպաստ պայմաններ:

Այդ կապակցությամբ Պայմանավորվող կողմերը կարող են սահմանային մաքսային կետերում ստեղծել աշխատանքային խմբեր՝ պարբերաբար, առնվազն տարին մեկ անգամ հանդիպումներ կազմակերպելու համար՝ առաջացող մաքսային խնդիրների համար լուծումներ գտնելու նպատակով:

ՀՈԴՎԱԾ 14

Սույն Փոխըմբռնման հուշագրի բոլոր երեք Հավելվածները կհամարվեն դրա անբաժանելի մասերը:

ՀՈԴՎԱԾ 15

Սույն Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ կմտնի Պայմանավորվող կողմերի կողմից ուժի մեջ մտնելու համար համապատասխան ներքին ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով միմյանց ծանուցումից հետո, եւ գործողությունը կդադարի Համաձայնագրի գործողության դադարեցման պահից:

Կատարված է Երեւան քաղաքում, 2004 թվականի սեպտեմբերի 8-ին, երկու բնօրինակով՝ հայերեն, պարսկերեն եւ անգլերեն, ընդ որում՝ բոլոր տեքստերը հավասարազոր են: Դրույթների մեկնաբանման ընթացքում ծագած տարաձայնության դեպքում կգերակայի անգլերեն տեքստը:

Փոխըմբռնման հուշագրի ՀԱՎԵԼՎԱԾ 1

Հայաստանի Հանրապետության Կառավարությանն
առընթեր մաքսային պետական կոմիտեի պաշտոնատար անձինք

1. Գագիկ Խաչատրյան մաքսային պետական կոմիտեի
նախագահի տեղակալ
2. Կարեն Բեգլարյան մաքսային գործի կատարելագործման
եւ միջազգային հարաբերությունների
վարչության պետ
3. Հրանտ Գրիգորյան միջազգային հարաբերությունների
բաժնի պետ

Փոխըմբռնման հուշագրի ՀԱՎԵԼՎԱԾ 2

Իրանի Իսլամական Հանրապետության
մաքսային ծառայության պաշտոնատար անձինք

1. Ահմադ Դարուի միջազգային համագործակցության

վարչության գլխավոր տնօրեն

2. Ղուլամոեզա Սաֆարի միջազգային համագործակցության
Թահերի վարչության գլխավոր տնօրենի տեղակալ

3. Ահադ Փարահամ միջազգային համագործակցության
վարչության երկկողմ համագործակցության
կոմիտեի նախագահ

Փոխըմբռնման հուշագրի
ՀԱՎԵԼՎԱԾ 3

Ոչ սակագնային սահմանափակումներին ենթակա՝ հատուկ կարելորություն
ներկայացնող եւ ռազմավարական ապրանքների ցանկ
(Համաձայնագրի 4-րդ հոդվածի 1-ին կետ)

Ապրանքների տեսակը	Քանակական սահմանափակումներ	
1. գենք, գինամթերք, պայթուցիկ եւ պայթյունավտանգ նյութեր (ՆՅ խումբ 93)	անկախ քանակությունից	
2. թունավոր եւ Էկոլոգիապես վտանգավոր նյութեր (ՆՅ խումբ 29)	անկախ քանակությունից	
3. ռադիոակտիվ նյութեր	անկախ քանակությունից	
4. արտահանման վերահսկողության ցանկերում նշված ռազմավարական ապրանքներ տարանցման արտոնագրին համապատասխան	տրված արտահանման, ներմուծման կամ 	
5. թմրադեղեր եւ հոգեներգործուն նյութեր	անկախ քանակությունից	
6. Էթիլային սպիրտ եւ սպիրտային խմիչքներ (ՆՅ խումբ 22)	անկախ քանակությունից	
7. ոչնչացման վտանգի տակ գտնվող վայրի կենդանիներ եւ բույսեր, դրանց մնացուկներ	անկախ քանակությունից	
8. հնաոճ իրեր, մշակութային, հնագիտական եւ պալեոռոտոլոգիական արժեք ներկայացնող առարկաներ ու կրոնական դավանանքի առարկաներ	անկախ քանակությունից	
9. նավթամթերք (բենզին եւ դիզելային վառելիք)	1000 կգ-ից ավելի	
10. ծխախոտի արտադրանք	1000 կգ-ից ավելի	

Փոխըմբռնման հուշագիրն ուժի մեջ է մտել 2005 թ. մայիսի 19-ից:

MEMORANDUM OF UNDERSTANDING

Between the Customs State Committee under the Government of the
Republic of Armenia and the Customs Administration of the Islamic

Republic of Iran on the Implementation of the Intergovernmental Agreement on Mutual Administrative Assistance in Customs Matters

The Customs State Committee under the Government of the Republic of Armenia and the Customs Administration of the Islamic Republic of Iran hereafter referred to as the "Contracting parties",

Considering the Agreement between the Government of the Republic of Armenia and the Government of the Islamic Republic of Iran on "Mutual administrative assistance for the proper application of the customs law and for the prevention, investigation and combating of customs offences", signed in Tehran on 27 December, 2001, hereafter referred to as the "Agreement";

Recognizing the increased global concern for the security and facilitation of the international trade supply chain and the World Customs Organizations Resolution of June 2002 to that effect;

Convinced that action against customs offences can be made more effective by close cooperation between the Customs Administrations;

Aiming at proper application of customs legislation on exportation, importation, transit, transshipment, storage and movement of goods, as well as movement of travelers and means of transport between the customs territory of the Republic of Armenia and the customs territory of the Islamic Republic of Iran;

Recognizing that mutual administrative assistance and cooperation between the Contracting Parties in accordance with the provisions of the Agreement will improve the customs control process in both States;

Have agreed as follows:

Article 1

The assistance under the Agreement by either Contracting Party shall be provided in accordance with its existing national legislation and within the limits of its competence and available resources.

Article 2

The Agreement covers mutual administrative assistance in customs matters between the Contracting Parties and is not intended to impact mutual legal assistance agreements between their States.

If mutual administrative assistance is to be afforded by other authorities of the State of the requested Contracting Party, the requested administration shall indicate those authorities and, where known, the relevant agreement or arrangement applicable.

The provisions of the Agreement shall not give rise to a right on the part of any person to impede the execution of a request for assistance.

Article 3

With a view to apply the Article 3 of the Agreement, the Contracting Parties shall provide each other, either on request or on their own initiative, with information which helps to ensure the proper application of customs law and the prevention, investigation and combating of customs offences. Such information may relate to:

- a) new customs law enforcement techniques which have proved their effectiveness;
- b) new trends, means or methods of committing customs offences;

c) any other data that could assist customs administrations with risk assessment for control and facilitation purposes.

Either Contracting Party shall, in making enquiries in its customs territory on behalf of the other customs administration, use all means available to provide the requested assistance.

Article 4

With a view to implement point (a) of part 1 of the Article 4 of the Agreement the Contracting Parties shall, upon request, supply each other with information and documents they possess or have additionally received which allow them to exercise customs value control of goods which moved between the customs territories of the States of the Contracting Parties, such as the certified copy of customs declaration, the copies of invoice or invoice-specification, transport documents, packing lists as well as other relevant customs documents.

These documents shall be translated into English to the extent that enable the requesting Contracting Party to identify necessary information.

Article 5

In line with the provisions of part 1 of the Article 4 of the Agreement, the contracting Parties will exchange their experiences and achievements on customs matters through active participation in regional events and training courses organized by each Contracting Party.

Article 6

In accordance with the provisions of the Article 11 of the Agreement, the Contracting Parties shall authorize their officials, listed in Annexes I and II to the present Memorandum of Understanding, to communicate directly for the implementation and application of the Agreement. The list of the authorized officials shall be renewed, whenever necessary.

Article 7

The authorized officials of the Contracting Parties shall provide each other, either on request or on their own initiative, with the information listed in the Articles 4, 5, 6, 7 and 8 of the Agreement as well as the statistical data on bilateral trade.

The list of sensitive and strategic goods and articles subject to non-tariff barriers as mentioned in part 1 of the Article 4 of the Agreement is included in Annex III to this Memorandum of Understanding. Information on such sensitive and strategic goods and articles shall be exchanged on importation and/or exportation if its movement constitutes or appears to constitute a customs offence.

The list shall be revised, if necessary, on request of either Contracting Party.

Article 8

The Contracting Parties shall provide each other, either on request or on their own initiative, with information on actions planned, ongoing, or completed which constitute or appear to constitute a customs offence against the customs legislation of the State of the other Contracting

Party.

In cases that could involve substantial damage to the economy, public security or any other vital interests of the State of one of the Contracting Parties, the other Contracting Party shall, whenever possible, supply above-mentioned information on its own initiative without delay.

Article 9

In connection with the provisions of the Article 7 of the Agreement, on request, the requested Contracting Party shall provide the requesting Contracting Party with information or customs documents on instances where the latter has reason to doubt the information supplied or customs documents submitted by the person concerned in the customs matter.

Article 10

In accordance with the Article 9 of the Agreement, the Contracting Parties, within their competence, may permit the movement of unlawful or suspect goods out of, through, or into their territories with a view to investigating and combating customs offences.

If such movements cannot be carried out under the control of the Customs authority, that authority shall endeavor to initiate co-operation with the national authorities that have such competence or shall transfer the case to them.

Article 11

In connection with the provisions of the Article 14 of the Agreement, where the requesting Contracting Party would be unable to comply if a similar request were made to it by the requested Contracting Party, it shall draw attention to that fact in its request.

Compliance with such a request shall be at the discretion of the requested Contracting Party.

Article 12

The officials of the Contracting Parties shall meet, whenever necessary, on the request of either Contracting Party to discuss the matters connected with implementation of the Agreement and this Memorandum of Understanding or any other customs issues of mutual interest.

Article 13

In order to facilitate the passenger/cargo traffic in cross-border offices, the Contracting Parties shall provide each other more facilities for movement of the goods, travelers and means of transportation between their customs territories.

To this effect, the Contracting Parties may establish working groups at the cross-border offices to organize regular meetings, at least once a year, to find solutions to customs problems, which might arise.

Article 14

All three Annexes to the present Memorandum of Understanding shall be

considered as its integral part.

Article 15

The present Memorandum of Understanding shall enter into force after the Contracting Parties have notified each other through diplomatic channels that respective internal requirements for entry into force have been met and terminate at the moment of termination of the Agreement.

Done at Yerevan on 8 September 2004, in two original copies in Armenian, Farsi and English languages, all texts being equally authentic. In case of divergence in the interpretation of the provision thereof, the English text shall prevail.

ANNEX I

to the Memorandum of Understanding

Officials of the Customs State Committee under the Government of
the Republic of Armenia

- 1- Mr. Gagik KHACHATRYAN Deputy Chairman of
the Customs State Committee
- 2- Mr. Karen BEGLARYAN Head of Customs Mechanisms
Improvement and International
Relations Department
- 3- Mr. Hrant GRIGORYAN Head of International Relations
Division

ANNEX II

to the Memorandum of Understanding

Officials of the Customs Administration of the Islamic Republic of
Iran (IRICA)

- 1- Mr. AHMAD DAROUEI Director General, International
Cooperation Department IRICA
- 2- Mr. GHOLAMREZA Deputy Director General, SAFFARI
TAHERI International Cooperation
Department IRICA
- 3- Mr. AHAD PARAHAM Head of Bilateral Cooperation
Committee, International Cooperation
Department IRICA

ANNEX III

to the Memorandum of Understanding

List of sensitive and strategic goods
subject to non-tariff limitations
(Part 1 of the Article 4 of the Agreement)

Type of goods	Quantitative restrictions
1. Weapons, ammunition, explosives and explosive devices (Chapter 93 of HS)	Irrespective of quantity
2. Poisonous and ecologically hazardous substances (Chapter 29 of HS)	Irrespective of quantity
3. Radioactive substances	Irrespective of quantity
4. Strategic goods stated in export control lists	According to the issued license export, import or transit
5. Narcotic drugs and psychotropic substances	Irrespective of quantity
6. Ethyl alcohol and spirits (Chapter 22 of HS)	Irrespective of quantity
7. Wild animals and plants under the threat of extermination, their parts and derivatives	Irrespective of quantity
8. Antiquities, objects of cultural, archeological, paleontological value and object of religious cult	Irrespective of quantity
9. Oil products (petrol and diesel fuel)	Over 1000 kilograms
10. Tobacco products	Over 100 kilograms

The Memorandum of Understanding has entered into force on 19.05.2005.